Գնացքի մեջ թռչելու ժամանակը

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

## Դավիթն ու Գողիաթը

Զարգացած երկրներում ներդրումային միջավայրն աստիճանաբար վատթարանում է համաշխարհային ճգնաժամի հուժկու հարվածների տակ, ինչն ըստ որոշ գնահատականների կարող է տևել ավելի քան երկու տարի: Չնայած կառավարման բարձր արդյունավետությանը, տնտեսական աճը զարգացած երկրներում աննախադեպ կրճատվել է և շարունակում է կրճատվել: Այսպես, Գերմանական, Բրիտանական և Ֆրանսիական տնտեսությունների աճը 2009 թվականին ամենավարդագույն գնահատականներով չի գերազանցի 0.5 տոկոսը, իսկ Իսպանիայի ՀՆԱ-ի աճն արդեն բացասական է:

Ու թեև համաշխարհային ճգնաժամը հարվածում է նաև կառավարման համեմատաբար ցածր արդյունավետություն ունեցող զարգացող երկրների տնտեսությանը, իրավիճակը զարգացող աշխարհում անհամեմատ նվազ դրամատիկ է: Հնդկաստանի և Չինաստանի տնտեսությունները 2009-ին շարունակելու են աճել 6-ից 9-ը տոկոսի սահմաններում: Զարգացող երկրներում սպառման տեմպերը շարունակում են աճել, թիրախ ունենալով զարգացած երկրների սպառողական հասարակությունները: Համաշխարհային ճգնաժամի պայմաններում միգրացիոն գործընթացները կարծես նույնպես գործում են ի օգուտ զարգացող երկրների՝ լրացուցիչ ռեսուրսներ մղելով զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ:

## Մրցավազք արևմտյան ժառանգության համար

Կարգավորման ցածր մակարդակ ունեցող զարգացող ազատական տնտեսությունները, ուր տնտեսության հանրային հատվածը չնչին է, սոցիալական երաշխիքներն ու պետությունից սոցիալական ակնկալիքներն աննշան են, ազգային տարադրամը կայուն է, տնտեսական աճը համեմատաբար բարձր է, իսկ պետության դերը սեփականության վերաբաշխման գործում՝ էական, խիստ հրապուրիչ են դառնում արտասահմանյան ներդրողների համար:

Համաշխարհային ճգնաժամն ասես յուրահատուկ ինքնակարգավորման մեխանիզմ է՝ զարգացած և զարգացող երկրների միջև առկա ահռելի ճեղքը հարթելուն ուղղված գլոբալ ներհամակարգային գործընթաց: Պատահական չէ, որ ճգնաժամի պայմաններում զարգացող երկրները ներդրումների առումով առավել գրավիչ են և մրցունակ, քան զարգացած երկրները: Զարգացող երկրները, սակայն մրցակցությունից դուրս չեն: Նրանք մրցակցում են միմյանց հետ:

Ներդրումներ ներգրավելու գործում զարգացող երկրների միջև մրցակցությունն ընթանալու է ըստ էության հենց վերը նշված չափանիշներով: Ներդրումների համար մրցավազքում սակայն, ամենակարևորը համաշխարհային ճգնաժամի պայմաններում դառնում է կառավարման արդյունավետությունը և մրցավազքում շահելու են նրանք, ովքեր ներդրումների առավել բարենպաստ միջավայր կառաջարկեն լճացումից «փախչող» ներդրողներին:

## Սուր միտք, սուր ատամներ

Ի՞նչ կարող է անել Հայաստանը նման պարագայում: Կարևոր է նախ և առաջ ճիշտ գնահատել պահի ընձեռած արտակարգ հնարավորությունները: Իհարկե՛, անհրաժեշտ է փորձել մեղմել ճգնաժամի բացասական հետևանքները՝ արձագանքման սոցիալական միջոցներով: Սակայն եթե զարգացման մեծ ներուժ կրող այս ժամանակահատվածում սխալ կողմնորոշվենք և թռիչքաձև զարգանալու փոխարեն մեր գերխնդիրը համարենք գոյատևումը, ապա կարող ենք կորցնել աննախադեպ հնարավորությունը: Մեր պատմությունը նման էջեր շատ ունի: Թերևս հաճախ սխալվել ենք՝ գոյապայքարի իրավիճակում փորձելով թռիչքաձև զարգանալ, ինչի

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

համար խստագույն պատժվել ենք: Սակայն տնտեսության և հասարակության մրցունակության կտրուկ բարելավումը երկու իրավիճակներում էլ միայն օգտակար կարող է լինել: 21-րդ դարը Հայաստանի աննախադեպ զարգացման համար ավելի լավ հնարավորություն կարող է այլևս չառաջարկել: Մեկ այլ պատմական ճգնաժամի՝ Խորհրդային Միության փլուզումն օրերին կայացած տնտեսությունները՝ Բալթյան երկրները, Չեխիան, արդեն լավ գիտեն, թե ինչ հնարավորություններ է բացում նման ճգնաժամը սուր ատամների և մտքի համար: Միության փլատակների տակ կքած Հայաստանը, թերևս բոլոր հիմքերն ունի ճգնաժամին սև ակնոցներով նայելու համար: Սակայն կարող է և հանել ակնոցներն ու իրավիճակին նայել բաց աչքերով: Կարող է կտրուկ բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու բարելավել իր մրցունակությունը:

Գնացքը դնդաղեցրել է ընթացքը, եկել է նրա մեջ թռչելու ժամանակը:



*Համառոտագիրը մշակվել է ՄՀՄԿ կողմից կազմակերպված ««Եվրոպական հարևանության ծրագիրը 2 տարեկան է. առաջընթաց, մարտահրավերներ և ապագա» IV միջազգային համաժողովի քննարկումների ընթացքում: Մտքերն ու եզրահանգումները զուտ հեղինակային են և պարտադիր չէ, որ համընկնեն կազմակերպիչների, համաժողովի մասնակիցների կամ օժանդակողների կարծիքին:*

*Համաժողովը կազմակերպվել էր Եվրոպական Հանձնաժողովի, ԵԱՀԿ, Եվրախորհրդի, DFID երևանյան գրասենյակների և Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի աջակցությամբ:*